

Եւդոկիա իրարմէ բաժնուեցան, եւ Աբրահամ
հասաւ Տիգրանակերտ: Ինը տարի լաւ հովուե-
լէն ետեւ՝ 1763ին վախճանեցաւ Արղնայ վանքը,
եւ եկեղեցւոյ դրան մօտ՝ հօրը քով թաղուեցաւ:

Յովհաննէս մօրը մահուանէն ետեւ՝ իր
քեռւոյն՝ Աբրահամ Եպ.ին խնամոց տակ էր,
եւ երբ եօթ տարեկան եղած ատեն հայրն ալ
վախճանեցաւ, Աբրահամ զինք քովն առաւ, եւ
Արղնայ Բարձրահայեաց վանքը Յովհաննէս
ուսման կը պարապէր եւ դպիր եղաւ: Աբրա-
համու մահուընէն ետեւ՝ թողուց Յովհաննէս իր
հօրը «Քօսեանց» մականունը, եւ քեռւոյն «Նուր-
տինեան» մականունն առաւ, վասն զի քեռին իր
հօգեւոր եւ մարմնաւոր դաստիարակն եղած էր:

Այս միջոցին Երուսաղեմէն Տիգրանակերտ
նուիրակ եկած էր Յովակիմ Եպ. Քանաքեռցի,
որ վերջէն Երուսաղեմայ Պատրիարք եղաւ
(2 Օգ. 1775—1793 Սեպտ. 25 †): Յովակիմ
գլխաց այս որբ պատանւոյն, հետն առաւ, Գա-
մասկոսի մէջ Սարկաւազ ձեռնադրեց, եւ Երու-
սաղէմ տարաւ: 1765ին Յովակիմ Եպ. իբրեւ
Քեռի Երուսաղեմի՝ Կ.Պոլիս եկաւ, հետը բերաւ
Յ.Նուրտինեան սարկաւազը, որ վեց ամիս անոր
քով մնալէն ետեւ՝ զատուեցաւ եւ բնակեցաւ
եղբօրը քով, որ շատ տարիներէ վեր իր ազ-
գականաց հետ Կ.Պոլիս հաստատուած էր:
Ազուհացից օրերը շատ վարդապետներու քա-
րողները լսեց Յովհաննէս. բաղձաց նաեւ Սար-
գիս Արքեպ. Սարաֆեանի քարոզներուն ներկայ
ըլլալ, որուն համբաւը լսած էր՝ իբրեւ անուանի